37. ՀԵՔԻԱԹ ԱՎԴԸԼ ԲՈԼՅՈՒԿ ԲԱՇՈՒՆ ԵՎ ՉԻՆ ՄԱՉԻՆՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ԱԽՉԿԱՆ

Ժըմընկով թագավորմ՝ կէղնի, էդ թագավորին իրեք տղա կեր։

Դեռեք կզոռեն վըր էդ մարդուն, ջանդարդի կէղնի, կէլնի վերցու զուր տղեկներ ու զուր օտք ու ձեռք, կքոչե, կիգա ուրիշ թագավորի մը հողի վրա նստի։ Բաշլանմիշ կէնե քաղաքըմ լէ կշինե ուրեն, քաղաքն օր կշինե, խըլըսի, կկապե ղաչքեր ու կնստի, թը ի՞նչ է՝ ես քոռ իմ։

Օրըմ էդոր տղեկներ իրարու կասին.—Ջանը՛մ, քոռ մարդ իմա՞լ թագավոր կէղնի, հ՝էլնինք էրթանք հեքիմըմ գտնանք բերինք մըր հոր աչքերուն։

Մեծ տղեն կէլնի կէրթա պապուն կասե.—Թագավո՛ր ապրած, մզիկ ձեռք չի տա, քու աչքեր քոռ էղնին, ես պիտի հ՝էլնիմ էրթամ հեքիմըմ գտնամ քու աչքերուն, առնիմ հ՝իգամ։

Էդ տղեն է, օր հըմալ կասե, թագավոր ուր մարգերուն կասե.—Օտ ու ձեռք, դուք կաներ եք, հ՝էլեք, զէդ տղեն հըմալ զարկեք, օր էրթա ջըլերով պառկի։

Թագավորի հրաման է, կթափին վըր տղին հըմալ կծեծին օր լեշն կսենա։

Էնի գնաց, ըստհաղ օրթանճա տղեն կէլնի կիգա, կասե.—Թագավո՛ր ապրած, մենք չընք հ՝ուզի օր քու աչքերը քոռ մնան,

աղեկ չէ, ես պիտի էրթամ տոքթորը գտնամ, առնիմ հ'իգամ օր զքու աչքեր սաղցու։

Թագավորն էդոր լէ կասե.—Օտ ու ձեռք հ'էլեք, հըմալ կէնեք զէդ ադեն փառտել։

Կթափին վրեն աղեկըմ կծեծին, տղեն կփոշեմնի ուր ասածի վրեն, կքերե դպոճոճակն, կդառնա կիգա, կմտնի ուր հ'օդեն։

Դոր էկավ պզտիկ տղին, հ'էլավ գնաց, կանավ հոր հ'առեջ, ասեց.—Արո՜, մղիկ ձեռք չի տա, քու աչքերը հըմլա մնան։ Ես պիտի հ'էլնիմ էրթամ, տոքթորը գտնամ, առնիմ հ'իգամ վըր քու աչքերուն։

Էդ օր զէդի ասեց, թագավորն ուր խեչ էղողներուն ասեց.—Կէլնեք, հըմալ կծեծեք զէդի, որ չկառնա ճամբու հետ քելե, հեղըմ լէ հըմլա խալթ չէնե։

Զէդ օր ասեց, տղեն տվեց զուր մեջք պատին, դայաթմիշ էրեց, կանավ։ Օր հասան վրեն, կզարկեն, տղեն զարկեց քանիմ' հատ շրջեց գետին ու մեռան։

Թագավորն օր տեսավ զուր պզտիկ տղի կտրճութեն, օտք ու ձեռաց, ասեց.—Էլ մ'զարկեք, հըմկա գիտցա օր իմ տղեն զմըր հայիֆ կառնե դևեսներու մոտեն։ Զաթի ես օր թուղթ կիշքենք, դայմա նշանց կիտեր, թե. «Քու պզտիկ տղեն մինակ զքու հայիֆ կառնե»։

Տղին ասեց.—Օր հըմալ է, կանի զիմ աչքերու դեղն թարիֆ էնիմ քզիկ։ Իմ աչքերու դեղ նուռ է, էն նուռ լէ դևեսներու հ'էրկիր կա։ Էրթաս բերես էն նոներուց, ուտիմ՝ իմ աչքեր կսաղնա։

Պապն էր, օր էդ տեսակ ասեց, տղեն դարձավ էկավ ուր տուն, զուր օրպիսութեն տեսավ, խուռճիմ' հաց լցեց, թալեց վըր ձիու թարկին, հ'ընկավ ճամբա։

Տղեն օր հ'ընկավ ճամբա կէրթեր, մեկէլ էրկու ախպեր լէ հ'էլան հ'ընկան ուրանց ախպոր հ'ետևեն ու գացին։

Տղեն ասեց.—Ախպըրտա՜նք, գուք կնիկ ճրժու տեր եք, ընծիկ մ'իշկե՛ք, ես ու ես իմ, մի՛ գեք։

Ասին.—Չէ՜, մենք լէ կիգանք։

Ինչ էրեց, ախպըրտոց վրեն չկառցավ։ Գացին հ'ըռաստ էկան Հալվորում։ Հալվորն հարցուց, ասեց.—Կտրիճնե՛ր, ձըր գլխուն ու արևուն մեռնիմ, հ'ո՞ւր կէրթաք։

Էդոնք վերցին ասին.—Մըր պապ քոռցեր է, կէրթանք մըր պապու աչքերուն դեղ կբերինք։

Հալվորն ճանչցավ զթագավորի պզտիկ տղեն, ասեց.—Ավդըլ Բոլյուկ բաշի, զէն քու անահուն աստված օր կսիրես, նուռ օր բերիր, էն տեղեն հատըմ լէ տաս ընծիկ։

Ավդըլ Բոլյուկ բաշին ասեց.—Թըղ էղնի, հ'որի՞ չըմ իտա։

Հինգ ավուր ճամբախ գացին, հ'ըռաստ էկան ճամբու մը օր իրեք կէղներ։ Ճամբու գլուխ հալվորըմ նստուկ կեր, հարցուցին ասին.—Հալվո՛ր, էդա ճամբախ, ի՞նչ ճամբախ է։

Հալվորն ասեց.—Էդա ճամբախ որն օր գացեր է, ես չըմ տեսերի օր մեկ լէ դարձեր է հետ էկի։ Էդա մեկէլ ճամբով, օր էրկուսի հորթալախն է, հա՛ գացեր ին ու էկի։ Էն մեկէլն հ'ըմեն լէ կէրթան ու կիգան։

Ավդըլ Բոլյուկ բաշին ախպըրտոց ասեց.—Ախպե՛ր, դու գնա էդա ճամբու հետ, օր հա՛ գացողն էկեր է, մեկէլ միշնեկ էլ թըղ էրթա, էդա ճամբով, օր կէրթան ու կիգան, ես լէ կէրթամ էդա ճամբու հետ, օր գացեր ին ու չը՛ն էկի։

Զճամբախ տվեց հ'առեջ ու քշեց։

Շատ գնաց, քիչ գնաց, քեռշկ ու սարեմ' հ'էլավ դուրս։ Գնաց էդ քեռշկի դուռ իշքեց օր շաղցիմ' քար կա զարկուկ էդ դռան հ'ետև, զմեչք տվեց դռան, ճըխտեց. մեկ լէ տեսավ գլորվավ գնաց հ'ետևանց ու դռներ բացվան։

Կմտնի ներս, կտեսնա օր էդ տեխ քառսուն մարդու տեխ կա թալուկ, ամեկ մեկ տեխի խեչ մեկ-մեկ խայլոն կա դրուկ։ Դու մ'ասի էդ մարդիկ օր հ'ոդի ին, հարամի ին, դևա ին, զաշխարհ կողոպտեր ին ու բերի լցի հ'ոդի, ուրանց քեֆին կուտեն ու կխմեն։ Ցերեկներ կէրթան օլըրտին, հ'իրկուն կդառնան կիգան։ Էդ օր կիգան կմոտենան ուրանց քեռշկին, ճամբու հետ քիչըմ ակլանմիշ կէղնին, ուրանցնէ մեկ կճամբեն կիգա հ'առեջ։

Կասեն.—Գնա՛, մղիկ քիչըմ զատ էփե, հար մենք հ'իգանք։

Էդ օր կիգա դուռ, կիշքե դուռ բաց, կիշքե ջաղցի քար օր զարկուկ է էղի դռան հ'ետև, գացեր է զարկի պատ։ Հալբուքի ուրանք քառսունն անշախ կխըլվըլցուն տեխեն. վի կիշքե, մարդըմ կա նստուկ փանճարեն։

Կվախենա, զէդոնք օր կտեսնա, կդառնա հ'ետևանց, կիգա կհասնի ուր ընկերտոց, կասե.—Ախպըրտանք, մեկ մարդմ' էկեր է բացի զմըր դուռ, հ'էլի վի նստի։ Զէն ջաղցի քար օր մինք քառսունս անճախ կբերենք զարկենք դուռ, հըմալ է լոռտի, գացեր է

առի պատ։ Սուտն իհորե սատանա է, ես վալլահի կվախենամ էդ մարդուց. վախենամ ըղմի ղմեն սպանե։

Քոսե մը կեր էդոնց մեջ, ասեց.—Ախպըրտա՛նք, հեչ մի՛ վախենաք, ես կէրթամ ղէդ մարդ հըմալ կհամոզիմ օր հեծնաք լէ, քան չասե ձղիկ։

Հ'էլավ էկավ էդ մարդու խեչ, բարև տվեց ու նստավ։ Մարդ ղրարևն առավ։ Եր զրարևն առավ չէ, քոսեն հ'էրես առավ, հարցուց ասեց.—Ախպե՛ր, դու ի՞նչ մարդ իս։

Մարդն ասեց.—Խաբիր իմ, էկա էդա տեխ հանդիպա, ասի ըոհաթիմ, հ'էլնիմ լուսուն էրթամ։

Մեկէլ ընկերներ լէ էկան։ Հ'իրկուն աղեկ մը իկրամ աղատ էրին, կերցուցին, խմցուցին, հանին լուսուն դրին ճամբու։

Տարան օր ճամբու կդնեն, ասին.—Իմալ էնինք օր հեղ մը լէ էդի էդա հանդավորիկն չիդա։ Տարան սև դևի հ'էրկրի ճամբախ ցուցուցին, օր էրթալ էղնի, դառնալ չէղնի։

Մարդն հ'ընկավ ճամբախ ու գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, քեոշկ ու սարիմ' էկավ դախիլ էղավ, տեսավ էդ քեոշկ ու սարի հ'առջև բաղչեմ' կեր, բաղչի մեջ՝ հ'աղբուրըմ. հ'իջավ վրը հ'աղբրրին, լվացվավ, խմեց ջուր ու օղմըկավ մեկ կշտին, տուշունմիշ կէղներ։

Տղեն օր կմեզեր, մեկ լէ էդ քեոշկից տեսավ ախչիկըմ հանեց զգլուխ դուրս։ Կտեսնա օր էդ տղեն վրը հ'աղրրին նստուկ է, կասե. — Տղա՛, դու ափսոս չի՞ս, էկեր իս էդա տեխ նստե, հըմկա օր սև դև էկավ, մեծ կտոր հ'անկաճդ կթողե։

Տղեն կվերու ախչկան կասե.—Ախչի՛, լառ՛, հ'ո՞րի զմարդ կվախեցուս, սև դև լէ իմ պես մարդըմ. աստված իմալ հոգիմ' էնդորն է տվի, հոգիմ' լէ ընծիկ, էկավ թըղ հ'իդա, էդա տեխ նըստեր իմ, քու քսեն ի՞նչ կէթա։

Ախչիկն ասեց.—Քի հ'ապով կասիմ, ափսոս խորթմ' իս։

Տղեն ասեց.—Օր հըմալ է, սև դևի ճամբախ որ մեկն է, ասե օր կէրթամ, հ'ռաստ հ'իգամ ուրեն։

Ախչիկ աջ թևի վրեն ցուցուց։ Օր ախչիկ ցուցուց զդևի ճամբախ, տղեն հեծավ զուր ձին ու հ'ընկավ ախչկա ցուցուցած ճամբու հետ, գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, տեսավ օր դև էնդիեն կիգա։

Դև լէ օր տեսավ զտղեն, ասեց.—Հե՛յ գիդի հողածին, ինք ուր օտոք էկեր է իմ տան դուռ, ես էդա տեղրանք կօլըրտիմ։

Տղեն ասեց.—Կի՛, սորա գոհացի։

Ասելն ու թուր թալելն մեկ էղավ, զդևի գլուխ կտրեց, բերեց-ցած։

Զդեն օր սպանեց, ախչիկն ուր տեխ հ՚իմցավ, օր տղեն զդևի գլուխ կերավ։ Հ՚էլավ քիչըմ մեղրէ շարպաթ շինեց ու առավ էկավ տղի հ՚առևշ, առան զիրար ու դարձան էկան ղևի քոշկ, հ՚ելան վի ու թև թևի տվին, նստան։ Եր քիչ մը նստան, հանգստացան։ Ախ-չիկն վերուց ասեց.—Աստված զքու արև պահե, ղու իմա՞լ զիս փրցուցիր դևի ձեռքեն,—ախչիկն թաքրար վերուց ասեց,—ես Զին ու Մաչինի թագավորի ախչիկն ենք, օրըմ հ՚իշեր ենք բաղչի մեջ կօլըրդենք, մեկ լէ տեսնամ թրման հ՚ուշապըմ հ՚ընցավ իմ գըլ-խու վերևով ու բաղչի մեջ հ՚իշավ։ Դու մ՚ասի, էդ դև թման էղի, զարկեց վերուց ղիս բաղչի մեջեն ու էդա տեխ գրեց։

Տղեն տասն-տրսնուհինգ օր մնաց էդ տեխ ախչկա մոտ։ Օրըմ լուսուն հ՚էլավ տեսավ օր ի՞նչ տեսնա աղեկ է, դաշտ ու դուրան, էդ քեռշկի չորս բոլոր շաղըր բռներ է ու կանե։

Տղեն դարձավ ախչկան ասեց.—Ախչի՛, էդ ի՞նչ շաղըր է ու զորք է, էկեր ին դրե մըր դաշտի մեջ։

Ախչիկն հ՚էլավ իշկեց ու էկավ։ Էկավ ասեց.—Իմ պապու աս-քյարն է։ Հ՚իս հապով տարին դիր մը, կէներ ասքյար կ՚իզեր սև դևի վրեն, բալքիմ զիս ազատեր տաներ, չկռներ, կշարդվեր, դառ-ներ կէրթեր հետ։

Տղեն ասեց.—Ախչի՛, օր տանիմ զքզիկ, հ՚ոնի թասլիմ էնիմ-քու պապու սադրազամին առնե էրթա, դու կճանչնա՞ս զինք։

Ախչիկն ասեց.—Հ՚ո՞րի չըմ ճանչնա։

Տղեն ասեց.—Օր հըմալ է, էկո ես ու դու զմըր մատնկներ-փոխինք, տանիմ թասլիմ էնիմ, թըղ առնե էրթա։ Ընծիկ տարիմ՚ կիշքիս, էկա՝ ղաթի կիգամ, կառնիմ զքզիկ, չէկա՝ կէլնիս կարգ-վիս։

Առավ զախչիկն, տարավ Զին ու Մաչինու թագավորի սադրա-զամի մոտ։ Ասեց.—Էդա ձըր թագավորի ախչիկն է, օր դևն էր բերի։ Հըմկա զդև սպաներ իմ, բերեր իմ թասլիմ կէնիմ քզիկ, դու լէ տանես թասլիմ էնիս ուր հոր։

Սադրազամն ասեց.—Հ՚ո՞րի չըմ ճանչնա, ղաթի ես լէ էդոր համար իմ էկի, վը՛ր գլխուս, վը՛ր աչվիս, տանիմ սալամաթ թաս-լիմ էնիմ ուր հոր։

Զեն գնաց թագավորին, թե.—Ի՞նչ կասիս, սադրազամ զդև սպաներ է, առեր է զախչիկն ու էկի։

Հ'էլավ գնաց հ'առեջ, բերեց ուր քեռչկ ու սարի մեջ հ'իջուց։ Եբ բերեց հ'իջուց, քանիմ օր հ'ընցավ վրեն։ Թագավորն կանչեց զախչիկն, ասեց.—Ախչի լա՛ռ, էկո զքզիկ տամ սադրազամի տղին։

Ախչիկն ասեց.—Աբռ՛, էդա քանի տարի կէնե օր ես գացեր ենք, համրերե՛, տարիմ՝ թըղ մնա սորա։

Ախչիկն ժում ու ժամանակըմ ուր պապու քեռչկի մեջ մնաց, սորա հ'էլավ ճամբու օրթոլախ ուրեն հ'օդեմ՝ չինեց, նստավ հ'ինք։

Դառնանք մենք վըր տղին։

Տղեն օր զախչիկ ճամբու դրեց, հեծավ զուր ձին ու էն տեխեն զարկեց էկավ էդ քոսի ու էդ քառասուն ախպոր մոտ։

Էկավ մեկ լէ տեսավ դուռ փակուկ է, զմեջք զարկեց, ջաղցի քար թըռավ դըռան հ'ետևեն, հ'էլավ վի նստավ, հարի քառսուն դևն էկան։

Էկան օր տեսան մեկ լէ, էդ տղեն էկեր է, բացե զդուռ, հ'էլե վի, նստե։

Բարև տվին հ'իրարու, զբարև առան ու հ'ընցան նստան։ Օր հ'ընցան նստան, մեկ-մեկ ջըղարա քաշեցին։

Քոսեն ասեց.—Ախպե՛ր, դու բարով իս էկի, դու զէն մ'ասի, հ'ո՞ւր գացիր, հ'ո՞ւր էկար։

Տղեն ասեց.—Հ'ո՞ւր գացի, գացի սև դևին հ'ըռաստ էկա, սպանեցի, մեկ լէ դարձա էկա հ'ուդա։

Քոսեն օր զէդի լսեց, գլուխ կպավ հ'առիք։ Գողտուկըմ կանչեց զախպըրտանք, հանեց դուրս, ասեց.—Ախպըրտա՛նք, սև դևն օր մինե խարաճ կառներ, էդի զէնի օր սպաներ է, մենք ի՞նչ սև կապինք, էդոր ձեռք իմա՞լ կէղնի մըր հալ։

Քոսի մեկ հ'ընկեր վերուց ասեց.—Մեկ ճար է մանցե, լուսուն հ'էլնիս զէդի ճամրիս Մութհամամ հ'էրկիր, բալքիմ՝ էրթա ու չդառնա, օր ազատինք էդոր ձեռքեն, թը չէ՝ չարա չկա։

Քոսեն դարձավ էկավ, ասեց.—Ախպե՛ր, դու զէն մ'ասի, լուսմըթի դու ի՞նչ դին պիտի էրթաս։

Տղեն վերուց ասեց.—Քոսա՛, դու գինաս քոռն ու խարիբ մեկ է, ես ի՞նչ գինամ, ի՞նչ դիով պիտի էրթամ, պետք է դուք ընծիկ ճամբախ ցուցուք։

Կերան, խմեցին, լուսուն հ'էլան քոսեն տարավ Մութհամամ

հ՝էրկիր ճամբու վրեն հանեց։ Ասեց.—Դիտավի օր էրթաս, քու պապու աչքերուն դեղ կբերես։

Տղեն բռնեց զուր ճամբախ, կանչեց զուր աստված ու քշեց։ Շատ գնաց, քիչ դնաց, հինգ ավուր ճամբախ օր գնաց, քեռշկ ու սարիմ՝ հ՝առջև հ՝էլավ դուրս։

Ձիուց հ՝իջավ օր զձին քաշեր ներս, իշքեց օր էդ քեռշկին դուռ չկա։ Կապեց զձին դուռն ու էսդին-էնդին, վալլահի ծակըմ գտավ քեռշկի հ՝ետև։ Մտավ նեղ փողնիցմ՝ ներս, հ՝էրկեն փողանմ՝ էր տեխ, բռնեց ու գնաց ու գնաց, ինք լէ չըր դիներ հ՝ո՞ւր կէրթեր, մութն էր, տեսավ օր վերին դիեն լանկըմ հայ-հայ վըր դլխուն հ՝իջավ։ Թալեց զձեռք զէդ օտք բռնեց։ Օր բռնեց, օտաց տեր քաշեց, ինք քաշեց, բան օր մնաց՝ խալխալըմ մնաց տղի ձեռքի մեջ, օտաց տեր ֆըլըթավ գնաց։

Տղեն քիչըմ լէ գնաց, ծակըմ էրևաց, տեսավ օր դռան ղարզ մըն է։ Իշքեց էդ դարղըն վեր, տեսավ օր իրեք ախչիկ կան նըստուկ էդ տեխ։ Էն մեկ ախչիկ վերուց էն էրկուսին ասեց. «Գացեր ենք ջուր կթափենք, հողածին մը էկեր էր մըր փողնի մեջ, լանկեմ՝ զարկի, վիրն օր զարկեր ենք, գացեր էր գետըն վեր. էդի հոգ լէ չէրեց։ Բռնեց զիմ օտք, քաշեց, ես քաշի, ինք քաշեց, անջախ օր փըրցուցի բերի, բան օր մնաց ուր ձեռքի մեջ, իմ խալխալի թայ փըրցուց ու առավ հետ գնաց։

Էդ հըմալ օր ասին, տղեն զարկեց զդուռ պատ ու մտավ ներս։

Ախչկներ զէդ օր տեսան, թիկ թռան հ՝էլան կանան տղի հ՝առեջ ու քաշեցին ձեռքեն, նստեցուցին ուրանց հ՝որթըլախ։ Ինչ դլխուցավանք էնինք, տասնուհինգ օր տղեն մնաց ախչկներու մոտ, տասնուհինգ օրն օր թըմավ, հ՝էլավ բարըմնաց էղավ էդոնց մոտեն, մեկ լէ զարկեց էկավ քառսուն ախպոր մոտ։ Էկավ օր դուռ հ՝ավալկու պես դրուկ, քար լէ զարկուկ էր հ՝ետև, հ՝ըլուրեց զքար, տվեց մեկ դին, նստավ, հարի ուր մարդիկ էկան։

Էկան, բարև տվին հ՝իրարու ու նստան։ Օր նստան խըլըսան, ասին.—Ախպե՛ր, ամոթ չէղնի հարցունք, դու զէն մ՝ասի։ Հ՝ո՞ւր գացիք, հ՝ո՞ւր էկաք, նագադան կսկեք, սկեք ու դառնաք հ՝էլնեք հ՝էրևան։

Կերան, խմեցին, հ՝իրկուն օր էղավ, քոսեն մեկ լէ հարցուց։

— Ախպե՛ր, լուսումթի դու դո՞ր վի պիտի էրթաս։

— Դո՞ր վի պիտի էրթամ, հէրիք է ես էրթամ ու հըմլա դար-

տակ դառնամ հ'իգամ։ Զթադարուկ ձի տեսեք, լուսուն կհընկնիք իմ հ'առեջ, կէրթանք։

Քոսեն դարձավ էկավ մըտ ախպըրտանք, ասեց.—Ախպըրտա՛նք, էդ անաստված վըր մզիկ դրեր է, թե՝ լուսուն զձըր թադարուկ տեսեք, իմ հետ կտանեմ ղձզիկ. իմա՞լ էնինք, թե դեմ դնինք, ղըմենքս լէ կսպանե, չդնինք՝ չընք կռնա էրթա։

Մեկն վերուց ասեց.—Ի՞նչ խելք է, իմա՞լ դեմ կդնես, բարին էրթալն է։

Հ'էլավ լուսմթի, կերավ ուրեն բրդուճըմ հաց, հեծավ զուր ձին, զքառսուն ախպեր լէ էձդեց հ'առեջ, էրեց ուրին մշակ ու հ'ո՞ւր ես Զին ու Մաչինու թագավորի քաղաք, էկա՛ քի։

Զարկեց, գնաց ու գնաց Զին ու Մաչինու հ'էրկիր հ'էլավ դուրս, օր Զին ու Մաչինու հ'էրկիր հ'էլավ դուրս, ախպըրտոց ասեց.—Ախպը՛րտանք, էդ հըմլա չէղնի։ Մենք քառսուն մարդ ինք, բռնինք մզիկ խանիմ՝ քեռշեմ, հաց բերինք շուկից, ուտինք ու մնանք հ'ինք։

Չէ՞ խալխալ ուր մոտն է, խարճլըղ չունեն, առավ զքոսեն հետ, գնաց շուկեն։

Ասեց.—Տանիմ զխալխալ ծախիմ, բերինք հաց մզիկ ուտինք։

Հ'էլան, գացին շուկեն, յահուդում՝ դուքնի դուռ կանան։ Օր յահուդու դուքնի դուռ կանան, ասեց.—Յահո՛ւդի, խալխալ չըս առնի՞։

Յահուդին ասեց.—Հանե՛, տեսնամ։

Հանեց ծոցեն, տվեց յահուդու ձեռք։ Յահուդին օր զխալխալ տեսավ, ասեց. «Էդա խալխալին գին չկա, ես իմա՞լ էնիմ առանց փարի ղէդի էդոր ձեռքեն առնիմ։ Յավաշ տուպարուքեն մ'լէ ես կէնիմ»։

Տեսավ խարախոլներ էնդիեն կիգեն, յահուդին է, հավար ֆեզեմ՝ փրցուց.

— Յամա՛ն, էդա խարիր մարդիկ զիմ խալխալ վերցեր ին իմ ղուքնեն, կտանին, չըն իտա։

Խարախոլներ լէ էկան հասան, ասին.—Ի՞նչ է էղի։

Յահուդին ասեց.—Իմ խալխալ վերցեր ին էղա մարդիկ, կտանին, չըն իտա։

Խարախոլները ասին էդ մարդոց.—Հ'որի՞ չըք իտա։

Էդ մարդիկ ասին.—Ջանը՛մ, մըր խալխալն է, բերինք էդա տեխ կծախենք, տեսավ հըմկա իլավա շըլթա է կթալե վըր մըզիր

Խոսքըմ էնդորնէ, մեկ էնդորնէ, քաշին զիրար, գացին Թագավորին։ Թագավորն վերուց Ավդըլ Բոլյուկ բաշուն ասեց.

— Տղա լաո՛, ես զէդա յահուդին կճանչնամ, իմ հ՝էրկիր բանձր թյուճարն օր կա, էդա յահուդին է, սուտ չասե, հ՝որի՞ն իս վերցի զէնդոր խալխալ, չըս իտա։

Տղեն ասեց.—Թագավոր ապրա՛ծ, խալխալն ի՛մն է, թե օր յահուդին կասե՝ իմն է, ես ու յահուդին շարղըմ կբռնինք քու հ՝առէջ, որն օր սուտ ասեց, ղէնդոր գլուխ ղարկ։ Ես քառասուն մշակ ունեմ իմ հետ, կթողիմ քու մոտ ըռեհին, թե օր էրկու հատ լէ հըմալ խալխալ բերի, հորին օր ընծիկ էրկու հատ լէ կա, հանդե խալխալն իմն է, ես օղորդ կասիմ ու յահուդին սուտ, թե օր չբերի, զիմ քառասուն մարդոց գլուխ լէ զարկ։ Թը չէ՝ յահուդու տուն ու տեխ սրե կընցուս։

Թագավորն ասեց.—Յահուդի՛, գու ի՞նչ կասես, ի՞նչ օր կասե էդա տղեն, խաբուլ կէնի՞ս։

Յահուդին ասեց.—Հա՛, խաբուլ կէնիմ. օր բերեց՝ զիմ տուն ու տեխ սրե կընցուս, օր չբերեց՝ ղաթի խալխալն իմն է ու զուր քառասուն մարդու գլուխ կզարկես։

Ճամբեն զքառասուն հարամի ախպըրտանք, առան էկան լըցին բռնատուն։ Տղեն լէ քառասուն օր ժամանակ տվին, օր էրթա ու հ՝իգա։ —Օր հ՝անգնա չի գա, զքառասուն մշկի գլուխ լէ կկտրիմ, —ասեց թագավոր։

Տղեն վերուց ընկերներուն ասեց.—Զըվախենա՛ք, աստված մեծ է, ինշալլահ կիգամ ու զձզիկ սալամաթ պիտի փրցում էդ ծկեն, առնիմ, էրթամ։

Տղեն էնգան հ՝էլավ ու հ՝ընկավ ճամբախ, թե շատ էկավ, թե քիչ, քանի մ՝ավուր մեշ զարկեց էկավ Մութհամամ հ՝էրկիր իրեք քուրոշ մոտ։ էկավ, բարև տվեց ախչկներուն։ էնդոնք լէ առան զբարև ու նստան։ Հ՝էռսուն ու ին օր թամամ մնաց ախչկներու մոտ, մոռցավ զընկերտանք։ Հ՝էռսուն ու ին օր լըմնցավ, նոր հ՝ընկավ ընկերներ միտք, զնըյաթ ավրեց։

Ախչըկներ ասին.—Ավդըլ Բոլյուկ բաշի, հ՝ո՞րի զքու քեֆ ավրեցիր։

Տղեն վերուց ասեց.—Ձենե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, հ՝ընցած ավուր խալխալ օր տվիք ընծիկ, ընծիկ լէ քառասուն մշակ կա, տարա ֆըլան հ՝էրկիր, հանի դուրս, յահուդի մը բեբախտութեն թալեց վրես, ասեց.—Իմ խալխալն է, ես ասի իմն է, ես խեր

ղէդի, էրկուս լէ ունիմ, թողի զիմ մշկներ թագավորի մոտ ըռեհին, քառասուն օր ժամանակ ին տվի օր զմեկէլ էրկու խալխալ լէ առնիմ էրթամ, օր չտանիմ, զիմ մշկներու գլուխ կզարկին։ Հ'էսօր հ'էոսուն ու ինն օր կէնե, մնաց վաղ մենակ, սևավոր իմ մանցի։

Ախչիկն ասեց.—Իսկի՛ մարուխ մ'էնի, մեկ սահաթե մը զքզիկ կհ'իջում հ'ոնի։

Ախչիկ կանչեց, դևըմ դոլպի տկեն հ'էլավ ու էկավ։ Ասեց ախչիկ դևին.—Քանի՞ սահաթեն ղէդի տղեն կոնաս տանես Ջին ու Մաչինու թագավորի քեռշկի հ'առջև դնիս ու հ'իգաս։

Դևն ասեց.—Իրեք սահաթեն։

Ախչիկն ասեց.—Դե՛հ, կորի՛ գնա, իրեք սահաթ քու պառեկի վրեն մնա տղեն, քու ոինեն ու արևու շոգութենեն կպատռի իրարուց։

Կանչեց ըստհաղ պզտիկ դևին, ասեց.—Հէլի՛ ու արի։

Օր էկավ կանավ ախչկա հ'առջև, ախչիկն հարցուց, ասեց.—Քանի՞ սահաթեն կոնաս ղէդա տղեն տանես Ջին ու Մաչինու թագավորի քեռշկի հ'առջև դնիս ու հ'իգաս։

Դևն ասեց.—Մեկ սահաթեն։

Ախչիկն ասեց.—Շա՛տ աղեկ։

Հանեց զջուխտ խալխալ էլ տվեց տղին։ Տղեն առավ զխալխալներ դրեց ծոցք, բարեմնաց էղավ աղջկներուց ու հ'էլավ հեծավ դևի միջաց։ Դեն է, մեկ սահաթեն բերեց զտղեն Ջին ու Մաչինու թագավորի քեռշկի դուռն հ'իջուց ու ինք դարձավ գնաց։

Տղեն գնաց հ'էլավ թագավորի մոտ, զթամանեն զարկեց ու կանավ։

Թագավոր օր տեսավ, ասեց.—Տղա՛, դու էկա՞ր։

Ասեց տղեն.—Հա՛, էկա։

Թագավորն ասեց տղին.—Աղեկ էկար. օր հ'էսօր չիգեր հասներ, զքու մարդոց գլուխ կկտրենք լուսուն։

Տղեն ասեց.—Ինչ որ ասեր ենք, բերեր իմ, կանչի զյահուդին թող առնե զխալխալն ուր հետ ու հ'իգա հ'ուդա։

Գացին կանչին զյահուդին, առան զխալխալն ու էկան. օր էկան, թագավոր հարցուց, ասեց.—Յահո՛ւդի, զխալխալն բերի՞ր։

Յահուդին ասեց.—Հա՛, բերի։

— Հ'ո՞ւր է, հանե՛ տեսնամ։

Հանեց տվեց թագավոր։ Յահուդուց օր առավ զխալխալ, դարձավ վրը տղին, ասեց.

19—276

— Հ՞ո՞ւր է օր բերեր ես զէն խալխալներ, իշենք։

Տղեն հանեց ու տվեց թագավորին։

Թագավորն առավ զիրեք խալխալ, խառնեց հ՞իրար, ասեց յահուդուն. —Յահուդի՛, դեհ ճանչցի զքու խալխալն ջոկե։

Յահուդին ի՞նչ կճանչներ, շիվար զձեռք դրեց ծոցք մնաց։

Թագավորն տեսավ օր յահուդին սուտ հ՞էլավ, տղի վրեն իլավա կէներ։ Ասեց.—Ինչ խրդար յահուդի օլան կա իմ քաղքի մեջ, հայդե՛ զրմեն սրե կընցունք։

Յահուդիք զրմեն սրե հ՞ընցուցին, մենակ մեկ յահուդու աղե մը գացեր էր սար փետի, լսեր էր օր զուր ճիպլյաթ սրե հ՞ընցուցեր ին, իրեք օր մանցեր էր սար, չըր էկի։

Ավդրլ Բոլյուկն է՝ էղավ թագավորին սիրանելի, զուր մարդիկ լէ թողեց։

Էդ թագավորին լէ տղե մը կեր, էղավ էդ տղի հետ ախպըրդիր, կհեծնեն զուրանց ձիանք, զմշկներ ուրանց կթալեն՝ ուրանց հ՞ետևեն ու սարեր կօլըրդին, ավճութեն կէնեն։

Օրերուց օրըմ Ավդրլ Բոլյուկ բաշին էր, գացեր էր նեճրութենի, դարձավ օր կիգեր քաղաք։ Էկավ ճամբով կընցներ, էն ճամբով օր ախչիկ զուր հ՞օդեն էր չինի։ Ախչկա աչք առնելու պես, տղեն ճանչցավ, ճամբեց զուր ջառիեն։

Ասեց.—Ախչի՛, ախչի՛, հ՞իշի էդա ձիավորի հ՞առջև, ասե՝ զքզիկ թագավորի ախչիկ կկանչե։

Ջառիեն հ՞իշավ, վազեց ձիավորի հ՞ետևեն, պոռաց, կանավ. օր կանավ, գնաց հասավ, ասեց.—Տղա՛, էկո, զքզիկ թագավորի ախչիկ կկանչե։

Տղեն հ՞իշավ ձիուց, տվեց զձին ու մշկներ առան գացին, ինք էկավ գնաց թագավորի ախչկա խեչ։

Օր հ՞էլավ վի, աչք առավ հ՞իրար, ճանչցան զիրար, հընեն ասեց՝ էդա իմ նշանլուն է, էն ասեց՝ իմ նշանլուն է։

Խոշ ու բեջ քիչ մը հ՞իրարու հետ օր էրին, ախչիկն դարձավ տղին ասեց.—Տնաջե՛ն, էդա իրեք ամիս է օր քզիկ կիշքիմ, դու գո՞ր մանցիր չէկար։

Տղեն ասեց.—Իմ մշկներ դրռ վըր ձիաններու միջց կանուկ ին դուռ, խեղճ ին հայվըներ, հրաման էրե, հ՞իշնին քաջին ներս, նոր ես ու դու կմժլինք։

Ախչիկն հրաման էրեց, հ՞իշան, զձիանք քաշեցին ներս, էդ վախտ օր մշկներ զձիանք կքաշեն ներս ու տղեն կէլներ նստեր

թագավորի ախչկա մոտ, էն յահուդի տղեն օր գացեր էր սար փե-
տի, կփրցնի կիդա։ Կիգա, կտեսնա օր էդ տղեն, մըտ թագավորի
ախչիկն է, ասեց. «Կանի՛, հըմլա սրա էլ չըմ բերի, էրթամ թա-
գավորին ասիմ, էն տղեն օր դու շատ հազ կէներ մոտեն, գացեր
է նստի քու ախչկա խեչ, բալքիմ իտամ զգլուխ զարկելը»։

Դեմ քշեց գնաց թագավորի դիվան, թամանա զարկեց ու կա-
նավ։

Ասեց.—Թագավո՛ր ապրած, դու դինաս օր էդա հ՚էրկրի մեշ,
իմ հոխպոր պես ծանդր բաղրկան չկա, խարիբ տղի մը խոսքով,
տվիր ղգլուխ զարկել. հ՚էլի՛, գնա՛ տե՛ս խարիբ տղեն ի՞նչ է էրի,
գացեր է, հ՚էլի քու ախչկա խեչ, նստի։

Թագավոր ճամբեց հարցուց, տեսան օր օղորդ տղեն նստուկ
է ուր ախչկա մոտ։

Ճամբեց թագավոր, զտղեն առավ գնաց, ասեց.—Տղա՛ լաո,
դու տեսար քի հ՚ապով զիմ հ՚էրկրի թյուճարի տուն սրե հ՚ընցուցի,
դու հ՚որի՞ն իս էկի գացի նստի իմ ախչկա խեչ, դու խարիբ տղեմ՚
ես, քու հալու հետ։

Թագավորին ասեց տղեն.—Թագավո՛ր ապրած, օղորդ քու
ախչիկն է, իմ լէ նշանլուն է, հ՚ո՞րի խարիբ էղավ ընծիկ։

— Իմա՞լ քու նշանլուն է,—ասեց թագավոր։

— Իմ նշանլուն, հըմալ է. օր մը լէ տեսա սպիտակ չադրը-
ներըմ էկեր ին զարկի մըր դաշտի մեջ։ Հարցուցի քու ախչկան,
ասի. «Ախչի՛, էդա ի՞նչ չադրը է»։ Քու ախչիկն ասեց. «Իմ հոր
տան չադրրներն ին, հ՚ըմեն տարի տարուն հեղըմ կիգան կռիվ
վըր սև դևին, բալքիմ ազատին զիս ու առնին էրթան։ Կիգան կը-
ջարդվին կդառնան, կէրթան հետ»։ Հ՚էլեր իմ զիմ մատնեք փոխի
քու ախչկա հետ, տվեր իմ սադրազամ, առեր է էկի, չը՞ս հավա-
տա, կանչե՛ զքու ախչիկ, ա՛ռ էկո հ՚ոդա։

Կանչեց զախչիկն, առավ էկավ, ասեց.—Ախչի՛, օղո՞րդ, էդա
տղեն է սպանի սև դև, զքզիկ տվեր է սադրազամին, առեր է,
էկեր է։

Ախչիկն ասեց.—Հա՛, ու էդոր համար էր բելա, օր դու ասիր՝
«Ախչի արի զքզիկ կարգիմ», ասի՝ «Թըղ մնա»։ Գացի էրկու ճամ-
բու կցվոնք հ՚օդե մ՚շինե օր ճամբու հ՚ընցնող դարձողներ իշքիմ,
զիմ նշանլուն գտնամ։

Եր թագավորն հասկցավ օր սադրազամ զինք խաբեր է, ասեր
է՝ «Ես իմ սպանի զսև դև», կանչեց առավ էկավ։

Սադրազամ զինք թալեց թագավորի օտաց վրեն, ասեց.— Խալթմ՝ ենք էրի, ես կխնդրիմ օր վկա չրըռնես, օղորդն օր կհարցուս՝ սև դևն էդ տղեն է սպանի։

Եբ սադրազամ թալեց զինք թագավորի օտաց վրեն, էլ բան չասեց, բըլե ասեց. «Բռնեք զէն յահուդին սպանեք». գացին ըռնին զէն լէ սպանին։

Սորա բերեց յոթն օր, յոթն գիշեր բռնեց զուր ախչկա ու Ավդըլ Բոլյուկ բաշու հարսնեքն, զարկեցին ու խաղցան։

Եբ հարսնեք ֆրզավ, չկա թագավորին տո՞ւն, իրեք խաթ ձեռքըմ տուն տվեց փեսին ու ախչկան, ասեց.—Գացե՛ք ձզիկ ապրեք։

Ավդըլ Բոլյուկ բաշին է, ամիսմ՝ մնաց հ՝ոդի։ Օրիրուց օրըմ հոր աչքերն հ՝ընկավ միտք, ասեց. «Հա՜, հո՜, ես ի՞նչ բանի իմ էկի, էկա կարգվա ու մանցի»։

Հ՝էլավ տղեն ինչ էնե, հ՝էլավ կանչեց զքոսեն, ասեց.—Քոսա՜, իմ կնկան, իմ ընկերներուն մուխյաթ մանցի, հար էրթամ իմ պապու աչքերուն առնիմ դեղ, հ՝իգամ։

Տղեն էկավ թագավորից լէ հրաման առավ, ասեց.—Կէրթամ իմ պապու աչքերուն դեղ կբերեմ։

Թագավորն ասեց.—Գնա՜, ես լէ մուխյաթ. կմնամ քու մարգերուն, հարի դառնաս հ՝իգաս։

Տղեն հ՝էլավ մեկ լէ զարկեց էկավ Մութհամամ, ախչկներու մոտ։

Էկավ ասեց.—Ես չըմ գինա, էկեր իմ օր յոթ գլխեն խափշկի բաղչեն ընծիկ նշանց իտաք, կէրթամ հ՝ոնի, խզմաթ կա ընծիկ։

Ախչիկներ ասեցին.—Մենք քզիկ չընք խիմիշի ճամբի, հըմա գացիր հ՝ոնի՝ կսպանե զքզիկ։

Էնեցին, չէնեցին ախչկներ, վրեն չկառցան, ասեց՝ վալլա՜հի կէրթամ։

Ջանդարդի էղան, ցուցուցին, ասին.—Էդա դիով կէրթան։

Տղեն հինգ օր գիշեր ու ցերեկ գնաց, բաղչե մը հ՝էլավ դուրս։

Պառավըմ հ՝էլավ դուրս, տեսավ, օր աղե մը կանուկ է դուռ, ուտիս, չուտիս՝ հըմա զինք թամաշա էնիս։

Ասեց.—Քու ճամբողի վիզ կոտրի, իմա՞լ է խիմիշի զքզիկ ճամբեր է էկի, յոթ գլխեն խափշիկ, հ՝եռսուն օր կքնի, հ՝եռսուն լէ զարթուն կմնա, հ՝էսօր քսան օր կէնե օր քներ է, մանցեր է տասն օր. օր հ՝էլավ՝ հում ու լում կուտե զքզիկ։

Տղեն ասեց պառվուն.—Նանե՛, հ՝ո՞րի հըմալ կասիս, ես էկեր իմ իմ պապու աչքերուն էդա նոներուց դեղ տանեմ։

Ասեց.—Լաո՛, օր հըմալ է, կոտրե ճյուղըմ, քիսե տոպրակ,. հեծի ղքու ձին ու փախի, քանի յոթ գլխեն խափշիկն չ՝էլեր է քնուց։

Պառվու խոսքն բռնեց, տղեն ձեռք թալեց ճյուղըմ բերեց ցած, շոպկեց լըցեց առպրկի մեշ, թալեց վըր ձիուն, հեծավ զձին ու քշեց, քշեց էկավ Մութհամամի հ՝էրկիր, ուր ախչկներու մոտ։

Վերցուց զախչկներ լէ էդ տեխեն զարկեց էկավ Զին ու Մաչինու քաղաք։ էկավ թագավորի քաղաքն. օր հասավ, էն հ՝իրկուն մնաց, լուսուն հ՝էլավ գնաց թագավորի մոտ, ասեց.—Կխնդրե՛մ, ես լէ թագավորի մը տղա իմ, իմ պապ հալվորցեր էր, ես էկա օր դեղ տանենք ուր աչքերուն, էկա ու մանցի, էկեր իմ կխնդրեմ օր իզին իտաս, էրթամ իմ հ՝էրկիր, իմ հոր անեծք չառնիմ վրես։

Թագավորն ասեց.—Թը՛ղ էղնի, ո՞ր զքու ձեռք կբռնե, աստված քու հետ էղնի։

Հ՝էլավ լուսուն, հալալութեն առավ թագավորից ու հեծան զուրանց ձիանք, հ՝ընկան ճամբախ, քառսուն ու հինգ հոգիեն դևեսներով ու նշանլեսներով մեկտեղ։ էկան էդտեխ օր հալվոր զճամբախ ցուցուցեր էր ուրանց, տեսավ հալվոր դրա նստուկ է էդ տեխ։

Ասեց.—Հալվո՛ր, իմ ախպըրտանք էկա՞ծ ին, չը՞ն էկած ին, աճայիպ չը՞ս տեսերի։

Հալվորն ասեց.—Զը՛մ տեսերի։

Հալվորն օր ասեց՝ չըմ տեսերի, տղեն դարձավ ասեց.—Քո՛սա, զչաղբրներ կզարկես էդա տեխ, աղեկըմ կիշքիս իմ նշանլեսներուն ու տղեկներուն, հար ես հ՝իգամ. հ՝իգամ՝ օր գանգատ էնին. զգլուխդ կզարկիմ, էլ դու դինաս։

Հ՝էլավ թողեց զկնկտիքն ու զուր մշկներ հ՝ոգի, զարկեց էկավ քաղաքըմ, տեսավ օր ախպըրտոց մեկն էղեր է ֆռունճի, մեկ լէ՝ խազբանդ։ Զարկ էդ խազբանդ ախպոր խազի մեկ օտքն կոտրեց, օտքն օր կոտրավ, խաղը փիցավ։

Ասեց.—Հ՝ո՞րի զարկիր զէդ խազ սպանիր, ես ի՞նչ ճուհաբ իտամ թագավորին, ճուհաբ չի տամ, զիմ հախ կկտրե։

Տղեն ասեց.—Հարի՛ֆ, դու լէ թագավորի մը տղա իս, հ՝ո՞րի կվախենաս, հայդե՛, հ՝ընկի հ՝առշաս էրթանք։ Տվեց հ՝առջև ու քելեց։

Հոնկուց էկավ ֆոունճի ախպոր մոտ, վերցուց ղէն լէ առավ էկավ իրեք ճամբու կցվոնք, ուրանց մարգերու մոտ։

Հոնկուց բարձան էկան, ճամբու վրեն հալվոր մը լէ կեր, էն օր նուռրմ հուզեր էր ուրնե։

Ասեց.—Ախպըրտա՛նք, դուք քշեք գացեք, ես կէլնիմ էդա տեխ, հալվորըմ կեր, էրթալուա վախտ շատ յալվար էղավ, ասեց. «Օր բարով խերով դառձար էկար, նուռրմ ընծիկ իտաս, ես կիգամ կհասնիմ»։

Ախպըրտանքն է՝ հ՚ընցան, ինք էլավ զնուռ օր տվեց հալվորուն, կերավ, հալվորն ընկավ մեռավ։

Էկան մարգեր ճուհար տվին թագավորին, թե.—Ի՞նչ կասես, քու տղա Ավդըլ Բոլյուկ բաշին էկեր է, բերեր է քզիկ նուռ. օր ուտես, աչքերդ սաղնա, թող ղէդի, ինչքան դև ու հարամի կա, ժողվեր լըցեր է հ՚առշև, առի էկի։

Թագավորն է, օր լսեց ուր տղեն էկեր է, սադրազամ ու թաբուրըմ ասքյար ճամբեց տզի հ՚առեչ, բերին հ՚իշուցին։ Օր հ՚իշուցին, առավ գնոներ, գնաց հոր մոտ։

Հեր օր զնոներ իշքեց, աչքեր բացվան. օր բացվան, խըլըսան, դարձավ տղին ասեց. —Լաո՛, քառսուն տարի կէներ կապեր ենք զիմ աչվներ, էրանի քառսուն լէ կապենք, զէդ նոներ չտեսնենք։

Տղեն ասեց.—Հ՚ո՞րի, արո՛։

Հերն ասեց.—Էն նոներ օր գացիր էն բաղչի մեշ տեսար, էնի ֆիմ բաղչեն է, էն պառավն օր տեսեր իս, էնի քու մերն է։ Ժըմընկով հ՚էլան էդ տեխու դևեր զոռ էրին վըր մզիկ, փախցուցին բերին էդա տեխ, քու մամ մնաց հ՚ոնի։ Հըմկա կէրթաս զքու մեր բերիս՝ դու գինաս, չըս բերի՝ դու գինաս։

Էդ տեխեն ահդ ու վահդա էրեց տղեն, ասեց.—Հընչի զիմ մամ չբերիմ, զիմ մեշք չհարցըկիմ, իմ կնկտոց խեչ չպառկիմ։

Զէ՞ տղեն զճամբախ սորվեր էր, հ՚էլավ լուսուն հեծավ զուր ձին ու դեմ քշեց։ Քշեց գնաց յոթ գլխեն խափշկա բաղչեն հ՚էլավ դուրս։ Պառավ տեսավ զտղեն, ճանչցավ, ասեց.—Հե՛յ, վա՛խ, դու ֆ՚մ լէ էկար։

Ասեց.—Մարե՛, դու հ՚որի՞ հեյվախ կէնես, դու իմ մե՛րն ես, հէնօր չասիր՝ ես քու մերն իմ։

— Լաո՛, ինչ ասենք, էդ դև չսպանվի, օր ասեր ենք ի՞նչ կէներ։

Պառավ բերեց ղազեն պահեց։ Մնաց չուրի հ՚իրկուն։ Դևն էկավ։

Պառավն ղևին ասեց.—Տնաշե՛ն, քու հոգին ի՞նչ տեխեն է, չըս ասի ընծիկ, հանիմ հետ խաղամ հար դու հ՚իգաս, դու կէրթաս, կօլըրդիս, մինակ կմնամ սըբրս չի գա։

Դևն ասեց.—Պառա՛վ, քզիկ ինչ պետք կիգա իմ հոգին օր ասեմ։

Պառավն ասեց.—Դու լէ ասե։

Ասեց.—Իմ հոգին հանդ է դեղին խութու մը մեջ յոթ ճնճուղ կա, բալաք իծու փոր, Ճիաե պըշտխազ կարծե։

Լուսուն հ՚էլավ դև գնաց նեճիր, պառավ տղին ասեց.—Հըմլա կասե։

Տղեն հէլավ գնաց Ճիաե պըշտխազ հ՚աղբրի վրեն ջինեց զուր տեխն ու մտավ հ՚ինք։

Կեսօրվա տան էր, էծ խաստ էրեց էկավ օր ջուր խմեր։

Տղեն նետվանեղըմ զարկեց իծուն. օր զարկեց, էծ փիցավ գնաց վրեն զփոր ձևեց, հանեց խութիմ՚, տեսավ օր յոթ հատ դեղին ճնճուղ կեր էդ խութու մեջ։

Ջշորսի գլուխն կտրեց ու էկավ տուն մոր մոտ, էկավ տուն, տեսան օր դև հիվընդցեր է, պատի տախտի մեջ։

Տղեն տեսավ օր դև հիվընդցեր է, հ՚ընկի մըջ տախտին, ասեց.—Դու էդա խութին հ՚ապո՞վ իս հիվընդցի։

Դևն ասեց.—Տուր զէդ խութին թալիմ իմ բերան։

Տղեն չտվեց, հանեց զմեկէլ էրկու ճընճղու գլուխ լէ կտրեց։

Տփեց, զդև հանեց, մամ դրեց վըր պառեկ, հեծավ զուր ձին, տվեց զդևն հ՚առեջ, առավ էկավ։

Առավ էկավ ուր հոր հ՚էրկիր։ Ճուհաբ գնաց թագավորին.—Ջասի՞ս, Ավդըլ Բոլլուկ բաշին էկավ, յոթ գլուխ դևի վրեն հեսցուցեր է զմամն ու առի, էկի։

Բերեց հասուց ուր պապու սարի հ՚առջև, զմերն դրեց գետին։

Օր դրեց խըլըսավ, հանեց զմեկէլ ճնճղու վիզ փրցուց, դև սատկավ։

Նոր թագավոր հրաման էրեց ուր ժողովրդին, ասեց.—Բարձեք ու էրթանք մըր հ՚էրկրներ, մըր գրքի թվականն լըցվավ, օր կասեր՝ Ավդըլ Բոլլուկ բաշին կէլնի ու զդևեր կջարդե։

Հ՚էլան վերցին զուրանց աղբր-օզուրն բարձան էկան ուրանք հ՚էրկիր նստան։

Նոր էդ թագավոր յոթն օր, յոթ գիշեր զարկեց գոլ ու զուռնեն, բռնեց զտղի հարսնեքն էրեց։ Կերան, խմեցին ու աստված իշեցին։

Աստծուց հ՚իշավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ էլ՝ անկաճ էնողին։